ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ. Ա. ԲՐՈՒՏՅԱՆ—Փաստարկում, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984, 105 էջ (ռուսերեն)։

Այս աշխատությունը կարծիքների փոխանակության, մարդկային հաղորդակցության և դատողության որոշ յուրահատկություններ մասին է։ Գիրքը պատմում է այն մասին, թե մարդն հնչեցնում է առաջ քաշում այս կամ այն դրույթը, ապա ապացուցման պրոցեսում համոզում նրա ճշմարտացիությունը և իր տեսակետի նպատակահարմարությունը, զրուցակցին, ընդդիմախոսին դարձնում իր մտքերի ու գործերի համախոհ, այլ խոսքով՝ փաստարկում է։ Ընթերցողն համոզվում է, որ միջմարդկային մտավոր հաղորդակցման ոլորտ չկա, որտեղ մարդը չփաստարկի։ Եվ նայած նման լայն ընդգրկման, փաստարկումը որպես գատողության հատուկ ձև մինչև այժմ չունի բավարար տեսություն, թեև փաստարկման զրեթե բոլոր բաղադրիչները այս կամ այն չափով քննված և մշակված են համապատասխան գրականության (փիլիսոփայական, սոցիոլոգիական, հոգեբանական և այլն) մեջ։

Ելնելով հարցի այդ կարևորությունից, հեղինակը բացահայտում է փաստարկման էությունն ու բնույթը, վերլուծում նրա կառուցվածքն ու հիմնական բաղադրամասերը, հարաբերությունը փիլիսոփայության, տրամաբանության և ճարտասանության հետ։ Գ. Ա. Բրուտյանը զգալի տեղ է հատկացրել արտասահմանյան երկրներում, մասնավորապես ԱՄՆ-ում և Բելգիայում վերջին երկու տասնամյակում փաստարկման տեսության այս կամ այն կողմին նվիրված աշխատությունների վերլուծությանը։

Գրքի պատասխանատու խմբագիրն է փիլիսոփայական գիտությունների թեկնածու Է. Բ. Մարգարյանը։

Ա. Զ. ԲԻԳԻՑԱՆ—Հայկական ՍՍՀ օրենսդրությունը տեղական սովետների մասին, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1984, 166 էջ։

Աշխատության մեջ փորձ է արված հետազոտել այն բոլոր ակտերի ամբողջությունը, որոնց հիման վրա կազմավորվում և որոնցով իրենց գործունեության մեջ ղեկավարվում են հանրապետության պետական իշխանության տեղական մարմինները։ Գրքում տրված է նաև Հայկական ՍՍՀ տեղական սովետների մասին օրենսդրության վերլուծությունը. դա փաստորեն սովետների մասին հանրապետության օրենսդրական պատմությունն է՝ տեղական սովետների գործունեության կարգավորման վերաբերյալ ՍՍՀՄ իրավական ակտերի պատմության հետ կապակցված։

Տեղական սովետների մասին ՀՍՍՀ օրենսդրության հետազոտությունը տարվում է ըստ երեք հիմնական ժամանակաշրջանների՝ տեղական սովետների մասին օրենսդրության ընդունումից մինչև ՍՍՀՄ 1936 թ. սահմանադրության և Հայկական ՍՍՀ 1937 թ. սահմանադրության ընդունումը (սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջան), 1937 թվականից մինչև 1960-ական թվականների սկիզբը, այսինքն՝ զարգացած սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանը և երրորդ՝ զարգացած սոցիալիզմի գործառության ժամանակաշրջանը, այսինքն՝ մինչև 1980 թ. ներառյալ։ Աշխատության մեջ վերլուծվում է տեղական սովետների մասին Հայկական ՍՍՀ օրենսդրությունը իր ձևավորման ու զարգացման մեջ։ Զգալի ուշադրություն է դարձված սովետների աշխատանքի իրավական կարգավորմանը ՍՍՀՄ և ՀՍՍՀ սահմանադրություններում և հանրապետությունում գործող համապատասխան օրենսդրության մեջ։

Աշխատության պատասխանատու խմբագիրն է իրավաբանական գիտությունների թեկնածու Ռ. Զ. Ավագյանը։ Գիրքը նախատեսված է իրավաբանների, իրավաբանական ֆակուլտետի ուսանողների, ինչպես նաև ընթերցողների լայն շրջանակի համար։

Ա. Ա. ՄԱՆԱՍՅԱՆ—Գիտական գիտելիքի օբյեկտիվության մեթոդաբանական սկզբունքները և գիտության միասնությունը, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984, 315 էջ (ռուսերեն)։

Ժամանակակից փիլիսոփայական գրականության մեջ գիտական գիտելիքների միասնությունը կամ գիտության միասնությունը ներկայումս առանձնահատուկ կարևոր վիճահարույց պրոբլեմներից է։ Գիտության տրամաբանության, մեթոդաբանության և փիլիսոփայության մեջ կրնթե բոլոր կարևոր հարցերը սերտորեն կապված են խնդրո առարկա պրոբլեմի հետ։ Միաժամանակ այդ գիտության տրամաբանության և մեթոդոլոգիայի կոնկրետ հարցերի և ավելի լայն առումով՝ գիտելիքների փիլիսոփայության տեսության հարցերի լուծումը հաճախ կախման մեջ է գտնվում գիտական գիտելիքների միասնության պրոբլեմի լուծումից։ Գրքում հատկապես քննվում են գիտության միասնության փիլիսոփայական պրոբլեմները, տրվում գիտական գիտելիքների միասնության դիալեկտիկական մատերիալիստական ըմբռնումը, ստանձնացվում են պրոբլեմի վերլուծման մակարդակները և ասպեկտները։ Գիրքը բաղկացած է երկու բաժնից, որոնք ընդգրկում են յոթ գլուխներ։

Գիտության միասնության փիլիսոփայական պրոբլեմին նվիրված այս գիրքը նախատեսված է բնական գիտությունների, իմացության տեսության, տրամաբանության, մեթոդոլոգիայի պրոբլեմներով հետաքրքրվող մասնագետների համար։

Գրքի պատասխանատու խմբագիրն է փիլիսոփայական գիտությունների դոկտոր Հ. Ա. Գևորգյանը։

Ա. Գ. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ—Իրանի ազգային բուրժուազիայի կառավարության ներքին քաղաքականությունը (1951—1953 թթ.), ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984, 136 էջ (ռուսերեն)։

Գրքում վերլուծվում են Իրանի ներքին կյանքի տարբեր ոլորտներում Մ. Մոսադիկի կառավարության քաղաքականության էությունը, սկզբունքներն ու միտումները, ինչպես նաև այդ կառավարության փոխհարաբերությունները շահի և Իրանի քաղաքական ուժերի հետ։ Ազգային բուրժուազիայի կառավարության գործունեության ներքաղաքական հարցերը քննարկվում են Անգլիայի և ԱՄՆ-ի հետ Իրանի բարդ փոխհարաբերությունների ֆոնի վրա։

Հելինակի խնդիրն է բացահայտել բուրժուազիայի կառավարության ներքին քաղաքականության բնույթը, մի քաղաքականություն, որը զգալիորեն կանխորոշեց նրա ճակատագիրը։ Գ. Ստամբոլցյանը փորձել է ցույց տալ այդ քաղաքականության սկզբունքները, հիմնական ասպեկտները և զարգացման միտումները, ինչպես նաև այն պայմանավորող հիմնական գործոնները։ Մոսադիկի կառավարության ներքին քաղաքականության հարցերի օբյեկտիվ պարզաբանման միջոցով հերքվում է բուրժուական որոշ հեղինակների կողմից առաջ քաշված և տարածում ստացած այն սխալ տեսակետը, թե իբր Մոսադիկի կառավարությունը ըստ էության չի ունեցել իր քաղաքականության յուրահատկությունը և լիովին նույնական է նախորդ ու հաջորդող կառավարությունների հետ։ Գ. Ստամբոլցյանը միաժամանակ հակադրվում է այն հեղինակներին, որոնք գտնում են, որ Մոսադիկի կառավարության քաղաքականությունը իբր թե կրում էր բացառապես անկախ և ինքնուրույն բնույթ։

Գրքում ցույց է տրված, որ կառավարության ներքին քաղաքականությունը դա իրանական ազգային բուրժուազիայի և հենց իր՝ Մոսադիկի ունեցական և քաղաքական սկզբունքների արտահայտությունն էր։ Միաժամանակ փորձ է արված բացահայտելու Մոսադիկի կառավարության քաղաքականության մեջ տեղի ունեցող էվոլյուցիան, զարգացման պրոցեսում նրա մեջ կատարված աստիճանական փոփոխությունները. դրանք հաշվի առնելու միջոցով հնարավոր է դառնում պարզել այդ քաղաքականության իսկական էությունը։ Բուրժուական հեղինակները կեղծ ձևով են ներկայացնում կառավարության անկման հանգամանքները և այդ պատճառով էլ Ա. Ստամբոլցյանը կանգ է առնում ազգային բուրժուազիայի կառավարության անկման իսկական պատճառների վրա։

Գրքի պատասխանատու խմբագիրն է պատմական գիտությունների դոկտոր Գ. Մ. Եգանյանը։